Հովհաննես Թումանյան

Մանկություն

Երբ որ գարշելով տեսնում եմ շուրջս
Մոլեգնած կյանքի պատկերը ցավոտ,
Հաճախ, մանկությո՛ւն, խռոված հոգուս
Ներկայանում ես ինչպես առավոտ:

Եվ մանկան նման արտասվում եմ ես,
Երբ այս օրերում, չարությամբ լցված,
Քեզ, սուրբ մանկություն, հիշում եմ ինչպես
Երազի տեսիլք անհետ չքացած:

Ինչպես արևի ճաճանչը վերջին

Թռչում է հանկարծ, տիրում է խավար,
Այնպես շողացիր և անցար կրկին,
Մնացի անզոր, ցոփ կյանքին ավար:

Թե հնար լիներ մի անգամ դարձյալ
Դառնալ քո գիրկը... ա՛խ, ի՞նչ եմ ասում,

Այդ անհնար է. արդեն հանդերձյալ
Կյանքի ճամփան է իմ առջև բացվում:

Բայց մինչև այնտեղի սոսկալի՛ ուղի,
Ահա բռնություն, պատիվ անարգած,
Ահա հառաչանք, արտասուք աղի,

Ահա սև նախանձ և սեր սակարկած...

Կըմեռնեմ և ես այս ցավերի տակ
Ինձ հետ տանելով շատ իղձ ու փափագ,
Իսկ այս աշխարհից և ոչ մի պսակ
Միայն քո անմեղ, քո սուրբ հիշատակ:

Մի տխրատեսիլ գուցե գերեզման
Անցվորականից խնդրե մի բերան
Ողորմի ասել... ո՞վ գիտե, և այն
Կըլինի՞ արդյոք, կընայե՞ն նորան...

1889